ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի՝ ՀԵՌԱԿԱ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **«24» մայիսի 2024 թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 19-րդ կետը և Խորհրդի նախագահի 2024 թվականի մայիսի 21-ի № 2-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի Խորհրդի հերթական նիստը որոշվել է անցկացնել հեռակա էլեկտրոնային քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2024 թվականի մայիսի 24-ին, ժամը 9^{00}-ին և ավարտվել՝ ժամը 17^{30}-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Խորհրդի անդամներ՝

Տ. Հակոբյանը	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Լ. Բալյանը	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Սիրունյանը	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Բաղդասարյանը	- «Մասնակցային դպրոց» կրթական ծրագրի հիմնադրամի անդամ
Բ. Փափազյանը	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ
Ա. Բախշյանը	- «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական

Ա. Հակոբյանը - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

Քվեարկությանը չի մասնակցել՝

Ռ. Գևորգյանը - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացված փոփոխությունները հաստատելու մասին.

1) Ծրագրով նախատեսված և 1-ին եռամսյակում չստուգված 23 հանրակրթական ուսումնական հաստատություններից 10-ը ներառել ստուգումների 2024 տարեկան ծրագրի 2-րդ, իսկ 13-ը՝ 3-րդ և 4-րդ եռամսյակներում:

2) Ծրագրով նախատեսված և 1-ին եռամսյակում չստուգված 2 միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունները ներառել ստուգումների 2024 թվականի տարեկան ծրագրի 2-րդ եռամսյակում:

Օրակարգային հարցի քվեարկության վերաբերյալ անհրաժեշտ նյութերն ուղարկվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացել է:

Քվեարկության արդյունքում՝

1. Ժ. Անդրեասյանը 1-ին հարցին քվեարկել է «կողմ»,
2. Տ. Հակոբյանը 1-ին հարցին քվեարկել է «կողմ»,
3. Լ. Բալյանը 1-ին հարցին քվեարկել է «կողմ»,
4. Վ. Սիրունյանը 1-ին հարցին քվեարկել է «կողմ»,
5. Ա. Բաղդասարյանը 1-ին հարցին քվեարկել է «կողմ»,
6. Բ. Փափազյանը 1-ին հարցին քվեարկել է «կողմ»,
7. Ա. Բախշյանը 1-ին հարցին քվեարկել է «կողմ»,
8. Ա. Հակոբյանը 1-ին հարցին քվեարկել է «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 8 «կողմ»:

Այսպիսով, Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկության նիստին մասնակցած 8 անդամներից 8-ը օրակարգի 1-ի հարցին քվեարկել են «կողմ»:

Խորհրդի անդամ **Ռ. Գևորգյանը** օրակարգի 1-ի հարցի քվեարկությանը չի մասնակցել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել Տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացված փոփոխությունները.

1) Ծրագրով նախատեսված և 1-ին եռամսյակում չստուգված 23 հանրակրթական ուսումնական հաստատություններից 10-ը ներառել ստուգումների 2024 տարեկան ծրագրի 2-րդ, իսկ 13-ը՝ 3-րդ և 4-րդ եռամսյակներում:

2) Ծրագրով նախատեսված և 1-ին եռամսյակում չստուգված 2 միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունները ներառել ստուգումների 2024 թվականի տարեկան ծրագրի 2-րդ եռամսյակում:

Recoverable Signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Խորհրդի նախագահ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

_____ **Ժ. Անդրեասյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝ _____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն